ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԽՈՐՀՈՒՐԴ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

21 դեկտեմբերի 2016 թվականի **թիվ 26** քաղ. Մոսկվա

Սինգապուրի Հանրապետության հետ առեւտրատնտեսական համագործակցության գծով աշխատանքների կազմակերպման որոշ հարցերի մասին

1. Նպատակահարմար համարել Սինգապուրի Հանրապետության հետ ազատ առեւտրի վերաբերյալ համաձայնագիր կնքելու մասին բանակցությունների սկիզբը՝ Սինգապուրի Հանրապետության հետ ազատ առեւտրի վերաբերյալ համաձայնագիր կնքելու նպատակահարմարության մասին հարցի ուսումնասիրության գծով համատեղ հետազոտական խմբի (այսուհետ՝ համատեղ հետազոտական խումբ) աշխատանքներն ավարտելուց հետո:

2. Անհրաժեշտության դեպքում, համատեղ աշխատանքային խմբի աշխատանքի ընթացքում Սինգապուրի Հանրապետության հետ անցկացնել խորհրդակցություններ այնպիսի առանձին հարցերի մասով, որոնք կապված են ազատ առեւտրի վերաբերյալ համաձայնագիր կնքելու հետ:

3. Սահմանել, որ Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի կողմից Սինգապուրի Հանրապետության հետ ազատ առեւտրի վերաբերյալ համաձայնագիր կնքելու մասին բանակցություններ սկսելու վերաբերյալ որոշումը կայացնելուց հետո բանակցային գործընթացի ընդհանուր համակարգման ժամանակ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողմից

բանակցությունների վարումն ընդհանուր առմամբ իրականացվում է՝

ապրանքների առեւտրի մասով՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի եւ Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների բանակցային պատվիրակության միջոցով.

Ռուսաստանի Դաշնության բանակցություններին առնչվող կազմակերպչական հարցերի համակարգման ժամանակ Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների կողմից ծառայությունների առեւտրի եւ ներդրումների մասով հորիզոնական համաձայնությամբ։

Ծառայությունների առեւտրի եւ ներդրումների մասով հատուկ պարտավորությունների վերաբերյալ բանակցությունները վարվում են Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների կողմից։

4. Սահմանել, որ բանակցային գործընթացը համարվում է ավարտված՝ ապրանքների, ծառայությունների եւ ներդրումների մասով հավասարակշռված համաձայնություն ձեռք բերելուց հետո։

5. Խնդրանքով դիմել Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների կառավարություններին Եվրասիական տնտեսական հանձնաժողովի հետ համատեղ անցկացնել ապագա համաձայնագրի ձեւաչափը սահմանելու վերաբերյալ խորհրդակցություններ՝ անհրաժեշտության դեպքում տվյալ հարցը քննարկելով սինգապուրյան կողմի հետ։

6. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում այն ընդունելու օրվանից։

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի անդամներ՝

Հայաստանի Հանրապետությունից՝	**Բելառուսի Հանրապետությունից՝**	**Ղազախստանի Հանրապետությունից՝**	**Ղրղզստանի Հանրապետությունից՝**	**Ռուսաստանի Դաշնությունից՝**
Վ. Գաբրիելյան	**Վ. Մատյուշեւսկի**	**Ա. Մամին**	**Օ. Պանկրատով**	**Ի. Շուվալով**